**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

# ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 32-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 10-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ, «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 7-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 10-Լ հրամանում (այսուհետև՝ հրաման)՝

1) նախաբանը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝»,

2) հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխում՝

ա. վերնագրում «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ» բառից հետո լրացնել «, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ» բառերը,

բ. լրացնել 33.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«33.1. Ոստիկանության աշխատողները պարտավոր են պահպանել «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 7-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները:»:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ*** ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

***«15» 11 2023թ.***

***ք. Երևան***